

Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադա

11 մարտ 2017

5-րդ դասարան, տևողությունը՝ 120ր

ՏԱՐԲԵՐԱԿ Ա, Բ

1. Վաճառողի մոտ կա 20 փուչիկ՝ յուրաքանչյուրը դեղին, կանաչ, կապույտ կամ կարմիր: Այդ փուչիկներից կանաչ չեն 17 հատը, կարմիր է 5 հատը, իսկ դեղին չեն 12 հատը: Քանի՞ կապույտ փուչիկ կա վաճառողի մոտ:
2. Սեղանին դրված է երկու աման, որոնցից յուրաքանչյուրում կան երկու տեսակ մրգեր՝ խնձոր և տանձ: Առաջին ամանում խնձորների քանակը 9 անգամ շատ է տանձերի քանակից, իսկ երկրորդ ամանում խնձորների քանակը տանձերի քանակից շատ է 6 անգամ: Երկու ամաններում միասին կա 92 միրգ: Պարզել, թե քանի՞ խնձոր կա երկու ամաններում միասին:
3. 10 կարկանդակ պատրաստելու համար մայրիկին անհրաժեշտ է կես ժամ ժամանակ, իսկ Մերիին՝ 40 րոպե: Գոռը պատրաստ է մեկ ժամում ուտել 10 կարկանդակ: Մայրիկն ու Մերին անդադար պատրաստում են, իսկ Գոռը՝ անդադար ուտում: Գործընթացի սկզբից քանի՞ րոպե անց սեղանին կմնա ուղիղ 50 հատ կարկանդակ:
4. Էդգարն ու Թամարան խաղ են խաղում, ամեն անգամ հաղթողը վաստակում է 5 միավոր, իսկ պարտվողը՝ 3 միավոր: Ընդհանուր առմամբ 32 անգամ խաղալուց հետո Էդգարը վաստակեց 144 միավոր: Պարզել, թե քանի՞ անգամ է խաղը հաղթել Էդգարը:

Ուշադրություն: Յուրաքանչյուր խնդիր գնահատվում է առավելագույնը 7 միավոր: